
**ՀՅՈՒՄՆԱԿՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇԱՅԱՐԿՈՒՄԸ
1920 Թ. ՌՈՒՍ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ**

ԱՐՄԵՆ ԱՎԱԳՅԱՆ

1919 թվականին Անկարայում ստեղծված Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) կառավարությունը, որի առաջնային նպատակն էր փրկել Անատոլիան մասնատումից, ի տարբերություն իր նախորդների, Կովկասի նկատմամբ շատ պրագմատիկ քաղաքականություն որդեգրեց. Հյուսիսային Կովկասում և Ադրբեջանում Թուրքիայի ազդեցության գործոնը հաշվի առնելով՝ Հյուսիսային Կովկասի խնդիրն օգտագործել որպես խաղաքարտ բոլշևիկների հետ հարաբերություններում, իսկ Անդրկովկասում տարածքային հնարավոր ձեռքբերումներ ունենալ: Ուշագրավ է այն, որ եթե բոլշևիկների հետ հարաբերություններում երիտթուրք առաջնորդները օգտագործում էին իսլամական գործոնը (ինչպես օրինակ՝ Էմվերը և Ջեմալը)՝ առաջարկելով նպաստել բոլշևիկների ազդեցության տարածմանը մահմեդական երկրներում և համատեղ պայքարել Մեծ Բրիտանիայի դեմ, ապա քեմալականները կովկասյան գործոնի օգտագործմամբ ավելի իրական քաղաքականություն էին վարում՝ ակնարկելով, որ կարող են խնդիրներ հարուցել կամ, հակառակը, օգնել լուծելու այդ խնդիրները և խորհրդային կարգեր հաստատելու Ռուսաստանի համար կենսական նշանակություն ունեցող այդ տարածաշրջանում: Այդ համատեքստում քեմալական դիվանագիտությունը խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններում փորձում էր հանդես գալ որպես Կովկասի մահմեդականների հովանավոր¹: 1920-21 թթ. թուրք-բոլշևիկյան բանակցությունների ժամանակ քեմալական կառավարության որդեգրած դիվանագիտական խնդիրն էր՝ օգտագործելով Հյուսիսային Կովկասի գործոնը, ստիպել բոլշևիկներին զիջումներ անել և ստանալ ազգայնական պայքարի համար կենսական նշանակություն ունեցող զենք, զինամթերք և այլ նյութական օգնություն²:

Կովկասի խնդրում Անկարայի տեսակետը և գործնական առաջարկը շարադրվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Մուսթաֆա Քեմալի

¹ Այդ մասին մանրամասն տես **Ա. Ավագյան**, Թուրքիայի՝ որպես մահմեդականների հովանավորի դիրքորոշումը Մոսկվայի կոնֆերանսի ընթացքում, «Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում (գիտա-ժողովի նյութեր)», Եր., 2001, էջ 47-56:

² Պրոֆեսոր Բասքըն Օրանի խմբագրությամբ 2001 թվականին լույս տեսած «Թուրք արտաքին քաղաքականությունը. ազատագրական պայքարից առ այսօր իրադարձություններ, փաստաթղթեր, մեկնաբանություններ» երկհատոր ժողովածուում նշվում է, որ բոլշևիկների հետ հարաբերություններ հաստատելով՝ «Անկարան, Կովկասում բոլշևիկյան իշխանության հաստատման վրա աչք փակելով, դրա դիմաց ապահովագրեց արևելյան ռազմաճակատը և ամբողջ ուժն ուղղեց արևմտյան ռազմաճակատ, ինչը մեծ դեր խաղաց պատերազմում հաղթելու գործում» («Türk Dış Politikası. Kurtuluş Savaşından Bugüne Olgular», // Belgeler, Yorumlar, cilt 3: 1919-1980, İstanbul, 2001, s. 161):

(Աթաթուրք)՝ Վ. Լենինին ուղղված 1920 թվականի ապրիլի 26-ի նամակում, որով քենալական կառավարությունը պարտավորվում էր «համաձայնեցնել ամբողջ աշխատանքը և միավորել ռազմական գործողությունները ռուս բոլշևիկների հետ, և եթե խորհրդային ուժերը մտադիր են ռազմական գործողություններ ծավալել Վրաստանի դեմ կամ դիվանագիտական ճանապարհով, ազդեցության շնորհիվ ստիպել Վրաստանին միության մեջ մտնել և քել անգլիացիներին Կովկասից, ապա Թուրքիայի կառավարությունը պարտավորվում է գործողություններ ծավալել Հայաստանի դեմ և ստիպել Ադրբեջանի Հանրապետությանը ընդգրկվել խորհրդային հանրապետությունների կազմում»³: 1920 թվականի հունիսի 2-ին Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովուրդի Վ. Չիչերինի ստորագրած բոլշևիկյան կառավարության պատասխան նամակում նշվում էր, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը գոհունակությամբ տեղեկացել է Անկարայում Մեծ ազգային ժողովի կողմից ղեկավարվող կառավարության արտաքին քաղաքականության սկզբունքների մասին⁴: Նույն նամակում թվարկած սկզբունքների շարքում, ի թիվս այլոց, նշվում էր. «4) Թուրքիայի Ազգային ժողովի ընդունած որոշումը, ըստ որի՝ Թուրքահայաստանի, Քրդստանի, Լազիստանի, Բաթումի շրջանի, Արևելյան Թրաքիայի և թուրք-արաբ համատեղ բնակության շրջաններում այդ ժողովուրդներին ինքնորոշվելու սկզբունքի ճանաչում: Ինքնուտիքյան հասկանալի է, որ ազատ հանրաքվեն կիրականացվի փախստականների և տարագիրների մասնակցությամբ, որոնք ժամանակին իրենցից անկախ պատճառներով ստիպված էին լքել հայրենիքը»⁵:

Մուսթաֆա Քենալի նամակում Հյուսիսային Կովկասի մասին չի խոսվում, բայց ռուս-թուրքական բանակցությունների և Մոսկվայի պայմանագրի նախապատրաստման աշխատանքների ժամանակ մի քանի անգամ այս խնդիրը շահարկվել է: Մասնավորապես, բոլշևիկներին անհանգստացնում էր թուրքերի ազդեցությունը Հյուսիսային Կովկասում, նաև այն, որ մի շարք ընդվզումներ և դժգոհություններ հրահրվում կամ ղեկավար-

³ Архив внешней политики РФ (АВП РФ), ф. 132, референтура по Турции, оп. 3, папка 2, д. 3, 1920 г., л. 3:

⁴ Տե՛ս **Ключников Ю. В., Сабанин А. В.** Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Часть III. От снятия блокады с Советской России до десятилетия Октябрьской Революции. Выпуск I. Акты советской дипломатии. М., 1928, էջ 26-27:

⁵ Նույն տեղում: 1950-70-ական թթ. թուրքական պատմագրության մեջ Վ. Չիչերինի նամակը ամբողջությամբ չէր մեջ բերվում, միայն նշվում էր, որ «Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Չիչերինի՝ Մուսթաֆա Քենալին հղած պատասխան նամակում, չխոսելով համագործակցության մասին, հայտնվում էր, որ Խորհրդային Ռուսաստանը ողջունում է Ազգային ուխտի (Misak-ı Milli) սկզբունքները և ցանկանում է անմիջապես քաղաքական հարաբերություններ հաստատել Անկարայի կառավարության հետ» (**Ismail Soysal**, *Türk Dış Politikası İncelemeleri İçin Kılavuz* (1919-1993), İstanbul, 1993, s. 41): Մինչդեռ Խորհրդային Ռուսաստանի կողմից Անկարայի կառավարության հռչակած Ազգային ուխտի պաշտոնական ճանաչման խնդիրը 1920 թ. օգոստոսին Մոսկվայում տեղի ունեցած բանակցությունների ամենախնդրահարույց կետերից մեկն է եղել: Վ. Չիչերինի նամակի թուրքերեն թարգմանված ամբողջ տեքստն առաջին անգամ 1979 թ. հրատարակել է պատմաբան Յերասիմոս Սթեֆանոսը իր «Թուրք-խորհրդային հարաբերություններ» գրքում (տե՛ս **Yerasimos Stefanos**, *Türk-Sovyet İlişkileri*, İstanbul, 1979, էջ 238-239):

վում էին Թուրքիայից: Քենալական կառավարությունը իր հերթին շահագրգռված էր հնարավորինս շուտ պատվիրակություն ուղարկել Մոսկվա⁶:

Քենալական կառավարության առաջին պատվիրակությունը, որը ղեկավարում էր արտաքին գործերի նախարար Բեքիր Սամին (Քունդուխ) Կովկասով անցնելու անհնարինության պատճառով⁷ Ռուսաստան մեկնեց Սև ծովով և Մոսկվա ժամանեց 1920 թ. հուլիսի 18-ին՝ 69 օր տևած ճամփորդությունից հետո⁸:

Մոսկվայում Թուրքիայի Ազգային ժողովի պատվիրակությունը սառը ընդունելության է արժանացել և առաջին օրերին չի կարողացել հանդիպել Վ. Չիչերինի հետ, որը Պետրոգրադում մասնակցում էր Երկրորդ ինտերնացիոնալի նիստերին: Այդ ընթացքում Բեքիր Սամինի պատվիրակությունը հյուրընկալվել է Մոսկվայի թաթարական դպրոցում, որտեղ կազմակերպված ճաշի ժամանակ հանդիպել է Էնվեր փաշային⁹: Վերջինիս ներկայությունը Մոսկվայում ուժեղացրել է պատվիրակության անհանգստությունը և անհրաժեշտություն առաջացրել հրատապ լուծել այն հարցը, թե ով իրավունք ունի խոսելու Թուրքիայի անունից: Այդ իսկ պատճառով Վ. Չիչերինի և Լ. Կարախանի հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ Թուրքիայի Ազգային ժողովի պատվիրակությունը բարձրացրել է այն հարցը, որ միայն իրենք են իրավասու խոսելու Թուրքիայի անունից, և որ Էնվեր, Ջենալ ու Յալիլ փաշաները նման իրավասություն չունեն¹⁰:

1920 թ. օգոստոսին ռուս-թուրքական բանակցությունների ամենաբարդ հարցը, որի շուրջ բախվեցին երկու պետությունների շահերը, և թուրքական պատվիրակությունը որպես խաղաքարտ օգտագործեց Յուսուֆյան Կովկասի խնդիրը, Յայաստանի նկատմամբ վարվելիք քաղաքականությունն էր և այդ համատեքստում Վան, Մուշ և Բիթլիս վիլայեթների Յայաստանին հանձնելու Վ. Չիչերինի պահանջը:

Մոսկվա մեկնելուց առաջ թուրքական պատվիրակությանը տված հրահանգներից էր 1920 թվականի ապրիլի 26-ին Մ. Քենալի նամակում նշ-

⁶ Անկարայի կառավարության շահագրգռվածությունը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ երիտթուրքերի առաջնորդները՝ ինչպես Էնվերը, Ջենալը, Յալիլը, արդեն բանակցություններ էին վարում բոլշևիկների հետ, իսկ ազգայնական շարժման ամենաազդեցիկ գործիչներից մեկը՝ Էնվերի կողմնակից և «Քարաքուլ» կազմակերպության հիմնադիրներից Քարա Վասըֆը, շրջանցելով Մ. Քենալին և կառավարությանը, կապեր էր հաստատել բոլշևիկյան կուսակցության Կովկասի կառույցների հետ (տես **Yusuf Kemal Tengirşenk**, *Vatan Hizmetinde*, İstanbul, 1976, էջ 146):

⁷ Պատվիրակության անդամ, Անկարայի կառավարության տնտեսության նախարար Յուսուֆ Քենալ Թենգիրշենքը իր հուշերում նշում է, որ պատվիրակությունը հասել էր մինչև Բայազետ, որտեղ Ջավիդ անունով ոմն գնդապետ ասել է. «Յայերը թույլ չեն տալիս, որ Արաքսից նույնիսկ թռչուն անցնի: Դուք էլ Արաքսով չեք կարող անցնել: Վերադարձեք»: Պատվիրակությունը ետ է դարձել և Տրապիզոնից նավով Տրապես է մեկնել (տես **Yusuf Kemal Tengirşenk**, նշվ. աշխ., էջ 149):

⁸ Բեքիր Սամինի ղեկավարած պատվիրակության կազմում ընդգրկված էին Յուսուֆ Քենալ Թենգիրշենքը, Իբրահիմ Թալի Օզգյորենը, Լազիստանի պատգամավոր Օսման բեյը (վերջինս ընդգրկված էր ռուսերենին տիրապետելու պատճառով և թարգմանչի դեր էր կատարելու) և Սեյֆի Օզգյորենը (տես «Türk Dış Politikası. Kurtuluş Savaşından Bugüne Olgular», // *Belgeler, Yorumlar*, cilt 3: 1919-1980, İstanbul, 2001, s. 168):

⁹ Տես **Yusuf Kemal Tengirşenk**, նշվ. աշխ., էջ 153:

¹⁰ Տես նույն տեղը, էջ 160:

վածի համաձայն Հայաստանով անցնող երկաթգծի բացումը, ինչպես նաև ՀՀ-ի վրա համատեղ հարձակման խնդիրը, քանի որ ռազմավարական առումով թիկունքից հարձակման դեպքում հայկական ուժերի բաժանումը երկու ռազմաճակատի կիեշտացնելը Քյազիմ Քարաբեքիրի բանակի արշավը Հայաստանի Հանրապետության վրա¹¹:

Վ. Չիչերինի հետ հանդիպումից առաջ 1920 թվականի օգոստոսի 4-ին Մոսկվայում թուրքական պատվիրակությունը առաջին հանդիպումը ունեցավ Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովուհասարի տեղակալ Լև Կարախանի հետ, որի ընթացքում բարձրացրեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրով թուրքիային զիջած տարածքներին տիրանալու և Հայաստանի դեմ ռազմական գործողությունների հարցերը: Սակայն Կարախանը, մերժելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նշված սահմանը որպես հիմք ընդունելու պահանջը, պատասխանել է, որ թուրքիայի հարձակումը Հայաստանի վրա իրենք նպատակահարմար չեն գտնում նախ այն պատճառով, որ Ռուսաստանը մտադիր է ինքնուրույն լուծել Հայաստանի խնդիրը, ինչպես նաև թուրքական հարձակումը կզորքի Եվրոպայի հասարակական կարծիքը¹²: Այնուհետև 1920 թվականի օգոստոսի 17-24-ը Խորհրդային Ռուսաստանի և Անկարայի կառավարության միջև քաղաքական պայմանագիր կնքելու անարդյունավետ բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունն անակնկալի է գալիս Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև ստորագրված պայմանագրի կապակցությամբ, որից հետո Չիչերինը հայտարարում է, որ այսուհետ Ռուսաստանը թուրքերի հետ կապ հաստատելու համար երկաթգծը բացելու հարցում չի կարող ճնշում գործադրել Հայաստանի վրա¹³:

Ուշագրավ է, որ Վ. Չիչերինի կողմից Վանի, Մուշի ու Բիթլիսի վիլայեթները Հայաստանին վերադարձնելու պահանջը ներկայացնելու օրվա առաջին կեսին Բեքիր Սամին հանդիպել էր Հյուսիսային Կովկասից ժամանած մի խումբ երիտասարդների հետ և այդ հանդիպմանը քննարկած թեմաների մասին որևէ տեղեկություն չի հայտնել պատվիրակության մյուս անդամներին¹⁴: Չիչերինի հետ երեկոյան տեղի ունեցած առանձնազրույցի ժամանակ վերջինս պաշտոնապես առաջ է քաշել երեք վիլայեթների՝ Հայաստանին հանձնելու խնդիրը¹⁵: Տեղեկանալով Չիչերինի առաջարկի մա-

¹¹ Մոսկվա մեկնելիս Բեքիր Սամինի պատվիրակությանը երգրումուն հյուրընկալել էր արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Քարաբեքիրը: Նա, տեղեկացնելով, որ Անկարան մերժել է Սարիլամիշի և Կարսի ուղղությամբ հարձակման նպատակով զորակոչ հայտարարելու իր առաջարկը, խնդրել է համատեղ դիմել Ազգային մեծ ժողովին: Բեքիր Սամին, Յուսուֆ Քեմալի և Քյազիմ Քարաբեքիրի համատեղ ստորագրությամբ զորակոչ հայտարարելու առաջարկին Անկարայի կառավարությունը դրական պատասխան է տալիս: Այդ իսկ պատճառով Ք. Քարաբեքիրը Հայաստանի վրա հարձակվելու համար սպասում էր Մոսկվայից ստացվելիք պատասխանին (տե՛ս **Yusuf Kemal Tengirşenk**, նշվ. աշխ., էջ 147):

¹² Տե՛ս **Yusuf Kemal Tengirşenk**, նշվ. աշխ., էջ 159: Թուրքական պատվիրակության՝ ռուսական զորքերի հետ կապ հաստատելու անհրաժեշտության մյուս փաստարկին Լ. Կարախանը պատասխանել է, որ Նախիջևանում արդեն երկու պետությունների զորքերի միջև կապ գոյություն ունի, որի միջոցով հնարավոր է նաև ուղիղ կապ Անկարայի հետ (տե՛ս նույն տեղը):

¹³ Տե՛ս **Yusuf Kemal Tengirşenk**, նշվ. աշխ., էջ 160:

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

¹⁵ Վ. Չիչերինի առաջարկն այնպիսի անակնկալ է եղել Բեքիր Սամինի համար, որ նա, չկարողանալով զսպել իրեն, բացականչել է. «Այդ դեպքում մենք ինչի՞ համար ենք պատերազմում: Արևմուտքում հույներին, արևելքում հայերին հող չտալու համար, այդպես չէ՞» (**Şevket Sureyya Aydemir**, Tek Adam Mustafa Kemal, cilt II 1919-1922, İstanbul, 1999, s. 380):

սին՝ պատվիրակության փոխնախագահ, ԹԱՄԺ-ի կառավարության տնտեսության նախարար Յուսուֆ Քեմալը հետաքրքրվել է, թե Բեքիր Սամին այս հարցով Չիչերինի հետ բանակցություն վարել է, թե ոչ, և ստանալով բացասական պատասխան՝ նշել է, որ նման խնդրով իրենք չեն կարող բանակցել, քանի որ վերադառնալուն պես Ազգային մեծ ժողովը պատվիրակությանը կախաղան կհանի¹⁶: Չնայած թուրքական պատվիրակության մերժմանը՝ Չիչերինի համառ պահանջով բանակցություններ այս խնդրի շուրջ վարվել են¹⁷:

Թուրքական պատվիրակությունը նախ հանդես եկավ ավանդական փաստարկով, թե Թուրքիայի որևէ շրջանում հայերը մեծամասնություն չեն կազմում, ուստի նման պահանջը հակասում է հենց բոլշևիկների հռչակած սկզբունքներին, ոտնահարում է մահմեդականների իրավունքներն, ու այդ իսկ պատճառով նման առաջարկը չի կարող դրական պատասխան ստանալ: Ավելին, թուրքական պատվիրակությունը համոզված է, որ Խորհրդային Ռուսաստանի առաջարկը ընդունելու դեպքում թուրք ժողովրդի տեսակետից Անկարայի կառավարությունը ոչնչով չի տարբերվի սուլթանական կառավարությունից, որը ստորագրել է Սևրի պայմանագիրը¹⁸: Չիչերինը հակադարձում է, որ նախատեսված շրջաններ հայերի գաղթ կազմակերպելը հնարավոր տարբերակ է¹⁹, իսկ այն փաստարկը, թե ամբողջովին մահմեդականներով բնակեցված Բայազետի լիվան (շրջան) խոչընդոտ կարող է լինել Չայաստանի երկու մասերի միջև, առարկում է՝ նշելով, որ այդ լիվայի տարածքով նեղ միջանցք տրամադրելով՝ նշված վիլայեթները կմիանան Չայաստանին²⁰:

1920 թվականի օգոստոսի բանակցությունների ժամանակ ուշագրավ է երկու կարևոր հանգամանք, որոնք հարկ է առանձնահատուկ քննել: Առաջինը՝ նշված վիլայեթները Չայաստանին հանձնելու հարցը քննարկելիս բոլշևիկները օգտագործեցին այդ պահին երիտթուրքերի հետ վարվող բանակցությունների փաստը և ներկայացրեցին, որ վերջիններս համամիտ են այդ առաջարկին: Եվ երկրորդը՝ տեղեկություններ ստանալով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունում ուժերի հարաբերակցության և Չայաստանի հարցում նրանց մոտեցումների միջև եղած հակասությունների մասին, թուրքական պատվիրակությանը հաջողվեց, շրջանցելով Չիչերինին, խնդիրը կարգավորել Լենինի և Ստալինի հետ, որոնք բավարարեցին թուրքական պատվիրակության պահանջները:

Թուրքական պատվիրակության հետ բանակցությունների ժամանակ Վ. Չիչերինն ուշադրություն հրավիրեց այն փաստին, որ Վանի, Բիթլիսի և Մուշի

¹⁶ Տե՛ս **Yusuf Kemal Tengirşenk**, նշվ. աշխ., էջ 164:

¹⁷ Բանակցությունների ողջ ընթացքն ամենայն մանրամասնությամբ թուրքական պատվիրակության փոխնախագահ Յուսուֆ Քեմալը ներկայացրել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ հատուկ այս խնդրի քննարկմանը նվիրված 1920 թ. հոկտեմբերի 16-17-ին տեղի ունեցած գաղտնի (փակ) նիստերին (տե՛ս TBMM Gizli Celse Zabıtları, cilt 1, 24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1336 (1921), Ankara, 1985, էջ 157-187):

¹⁸ Տե՛ս **Yusuf Kemal Tengirşenk**, նշվ. աշխ., էջ 167:

¹⁹ Թուրքիայի խորհրդարանում Յուսուֆ Քեմալն ասել է, որ, ի պատասխան թուրքերի այս փաստարկի, Վ. Չիչերինը հայտարարել է. «Հանք այդտեղից թուրքական բնակչությունը, և մենք այնտեղ կտեղավորենք հայերին» (АВП РФ, ф. 04, секретаруам Чучерина, он. 39, nanka 232, д. 53001, л. 3):

²⁰ Տե՛ս **Yusuf Kemal Tengirşenk**, նշվ. աշխ., էջ 168:

վիլայեթները Հայաստանին զիջելու առաջարկը հավանության է արժանացել Ջենալ և Հալիլ փաշաների կողմից²¹: Այս հայտարարությունն առաջացրեց թուրքական պատվիրակության անհանգստությունը, քանի որ նրանք, տեղյակ լինելով բոլշևիկների և երիտթուրքերի կապի մասին, մտահոգություն ունեին, թե Մոսկվան էնվերին և Անատոլիայում գտնվող նրա կողմնակիցների գործունը հարկ եղած դեպքում մտադիր է օգտագործել Ս. Քենալի դեմ²²: 1921 թվականի Մոսկվայի բանակցությունների թուրքական պատվիրակության անդամ դ-ր Ռըզա Նուրը իր հուշերում գրում է, որ երբ բանակցությունների ժամանակ վեճ ծագեց Աջարիայի սահմանի հարցում, ռուսները դարձյալ անդրադարձան էնվեր փաշային, որը փորձում էր համոզել ԹԱՄԺ-ի կառավարության պատվիրակությանը ընդունել բոլշևիկների առաջարկած սահմանագիծը²³: Հայաստանին տարածք չզիջելու և էնվերականների գործունը չեզոքացնելու համար Բեքիր Սամին շահարկեց Հյուսիսային Կովկասում բոլշևիկների ունեցած դժվարությունները և հանդես եկավ պատասխան առաջարկով. «Եթե դուք անկախություն տաք օտերին, ես, հարցը մեջլիսի հետ համաձայնեցնելով, Վանը հայերին կհանձնեմ»²⁴:

Չիչերինի առաջարկի և Բեքիր Սամիի հակաառաջարկի իմաստը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է քննել այդ երկուսի պատճառները:

Հայրենական պատմագրության մեջ բազմիցս նշվել է Մոսկվայի բանակցությունների ժամանակ և ընդհանրապես հայ-թուրքական հարաբերություններում Վ. Չիչերինի հայանպաստ դիրքորոշումը²⁵, որը, սակայն, հիմնված էր քաղաքական պրագմատիկ հաշվարկի վրա: 1920 թվականի նոյեմբերի 5-ին Ի. Ստալինին գրած նամակում Վ. Չիչերինը նշում է. «...Բեքիր Սամին և կոմպանիան մեր բարեկամներն են, թե՞ թշնամիները, մենք այսօր չզիտենք: Հայաստանի և Վրաստանի նկատմամբ մեր վերաբերմունքում պետք չէ ոչ մի րոպե մոռանալ, որ պատմության անիվի նոր պտույտի դեպքում այդ հանրապետությունները կարող են մեզ համար իրենց կողմնորոշումը փոխած ազգայնականների դեմ պատնեշ դառնալ: Դեպի մահմեդականություն կողմնորոշվելու մեր հաշվարկներում պետք է միշտ նկատի ունենալ, որ մի օր հակաբոլշևիկյան տենդենցը հակաանգլիականից կարող է ավելի ուժեղ լինել, ինչպես դա պատահեց Աֆղանստանում: Ես միշտ նախազգուշացրել ու զգուշացնում եմ ամբողջ հույսը մահմեդականության վրա դնելու ուղղության վտանգավորության մասին, որի ներ-

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 167:

²² Երիտթուրքերի առաջնորդների և բոլշևիկների հարաբերությունների, ինչպես նաև այդ գործունը քենալական կառավարության հետ վարվող բանակցություններում օգտագործելու մասին ավելի մանրամասն տե՛ս **Ռեմ Ղազանջյան**, Բոլշևիկները և երիտթուրքերը, Եր., 1998, **Arsen Avagyan**, Kemalistler, İttihatçılar ve Bolşevikler. Kurtuluş Savaşında Ankara-Sovyet İlişkileri, “Toplumsal Tarih”, sayı 159, Mart 2007, İstanbul, էջ 14-23, **Arsen Avagyan**, Kemalistler, İttihatçılar ve Bolşevikler. Mustafa Kemal’e karşı Enver Kartı (1920-1922), “Toplumsal Tarih”, sayı 160, Nisan 2007, İstanbul, էջ 38-47:

²³ Տե՛ս Dr. Rıza Nur’un Moskova-Sakarya Hatıraları, İstanbul, 1991, էջ 99: Խոսքը 20 կմ հողատարածքի մասին է, և Ռըզա Նուրի խոսքերով՝ «էնվեր փաշան մեր առաջ հանդես եկավ ինչպես ռուսական պատվիրակության անդամ» (նույն տեղում):

²⁴ **Doğan Acıoğlu**, Milli Kurtuluş Tarihi, 1838’den 1995’e, cilt I, İstanbul, 1998, ss. 233-234:

²⁵ Տե՛ս **Է. Ա. Չոհրաբյան**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Եր., 1979, էջ 186-189:

կայացուցիչը մեզ մոտ Նարիմանովն է»²⁶: Թուրքական պատվիրակության հետ բանակցությունների ժամանակ բարձրացնելով հայերի կոտորածի հարցը և այն անհապաղ կանխելու պահանջով հանդես գալով՝ Վ. Չիչերինը նույնպես առաջին հերթին գործում էր որպես փորձառու դիվանագետ՝ կանխատեսելով, թե նման փաստը ինչպես կանդրադառնա համաշխարհային հանրության կողմից քեմալական կառավարությանը սատարող բուլշևիկների վարկանիշի վրա: Այդ մասին նա նշում է 1920 թվականի հոկտեմբերի 5-ին Ռուսաստանի կոմունիստական կուսակցության քաղբյուրո հղած նամակում: «Օրջոնիկիձեն ուշադրություն է հրավիրում առ այն, որ եթե թուրքերը շարժվեն դեպի Հայաստանի խորքերը, մենք պետք է առաջարկենք հայերին մեր զորքերով գրավել նրանց երկիրը, որպեսզի կանխենք կոտորածը, որն իրոք ամենասարսափելին կլինի: Քեմալականների հետ մեր կապերի մասին այնքան է խոսվել, որ նման վայրագությունները մեզ ամենասարսափելի կերպով կարող են վարկաբեկել»²⁷:

Բուլշևիկյան ղեկավարության մեջ Կովկասում մահմեդականների վրա հենվելու կարևորության մասին պատկերացում ունեին նաև թուրքական պատվիրակության անդամները, հատկապես՝ Բեքիր Սամին, որը հանդիպել էր թե՛ Ադրբեջանի, թե՛ Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչների հետ և՛ 1920, և՛ 1921 թթ.: Մոսկվայի բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունն ամենուրեք օգտվել է թե՛ ադրբեջանցիների, թե՛ հյուսիսկովկասցիների աջակցությունից: Այսպես, երբ Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված պայմանագրի պատճառով թուրք-ռուսական բանակցությունները փակուղի են մտնում, թուրքական պատվիրակությանը խորհուրդ է տրվում հարցը քննարկել անմիջապես Վ. Լենինի հետ, և «մահմեդական ուղղության ներկայացուցիչները» նման հանդիպում են կազմակերպում²⁸:

²⁶ АВП РФ, ф. 04, секретаруам Чучерина, он. 39, папка 232, д. 52987, л. 43.

²⁷ Նույն տեղում: Ուշագրավ է, որ Վ. Չիչերինի հետ Վանի և Մուշի հարցով բանակցությունների ժամանակ Բեքիր Սամին ընդունել է Ադրբեջանում հայերին կոտորելու փաստը՝ նշելով, որ, սակայն, դա հայերին առիթ չի տալիս նույնն անել մահմեդականների նկատմամբ Կարսում (տե՛ս **Yusuf Kemal Tengirsenk**, նշվ. աշխ., էջ 166):

²⁸ Հանդիպման մասնակից Յուսուֆ Քեմալը իր հուշերում գրում է, որ Լենինը խոստովանում է, որ դաշնակցական Հայաստանի հետ պայմանագիր կնքելով՝ իրենք սխալ են արել և կաշխատեն ուղղել դա: «Եթե մենք չկարողանանք ուղղել, դուք կուղղեք», - ասել է Լենինը: Թուրքական պատվիրակությունը Լենինի այդ խոսքերը ընդունում է որպես Հայաստանի վրա հարձակվելու արտոնություն: Մոսկվայից ավելի շուտ մեկնած Յուսուֆ Քեմալը Թուրքիա հասնելուն պես Տրապիզոնից Լենինի խոսքերը հեռագրում է Ք. Քարաբեքիրին: Մի քանի օրից ստացած պատասխան հեռագրում Ք. Քարաբեքիրը տեղեկացնում է, որ թուրքական զորքերը Օլթիից անցել են հարձակման: Ըստ Յուսուֆ Քեմալի՝ հենց Լենինի խոսքերն են գոտեպնդել Քարաբեքիրին Հայաստանի վրա հարձակվելու համար (**Yusuf Kemal Tengirsenk**, նշվ. աշխ., էջ 163, 178, 187): Իր հուշերում Ք. Քարաբեքիրը նույնպես նշում է, որ Հայաստանի վրա հարձակվելու համար երկու անգամ դիմել էր Անկարա: Մ. Քեմալը 1920 թ. մայիսի 13 հեռագրով հարցրել է, թե «ինչպիսի՞ն կլինի բուլշևիկների վերաբերմունքը: Բուլշևիկների հետ մենք դեռևս պայմանավորվածության չենք հասել, կարո՞ղ ենք վստահ լինել, որ իրենք կաջակցեն մեզ» (**Kazim Karabekir**, İstiklal Harbimiz, 3 cilt, İstanbul, 1995, s. 1546): Եվ եթե միայն «երկու պետությունների բանակների միջև շփում հաստատելու համար թուրքական բանակը կառաջանա մինչև Շահտախթի-Սարիղամիշ գիծը», ապա Խորհրդային Ռուսաստանի հետ պայմանավորվածություն ձեռք բերելուց հետո Ք. Քարաբեքիրի բանակն անցնում է հարձակման Հայաստանի վրա (տե՛ս АВП РФ, ф. 04, секретаруам Чучерина, он. 39, папка 232, д. 52987, л. 40):

Հայաստանի հարցով բանակցությունների ձախողման ժամանակ 1920 թվականի սեպտեմբերի 1-ին Բեքիր Սամին նամակով դիմում է Կարախանին՝ ներկայացնելով Միդիաթ անունով ոմն մեկին, որը Հյուսիսային Կովկասի վտարանդիներից Վ. Լենինին ուղղված նամակ է բերել, և խնդրում է Վ. Զիչերինին և Լ. Կարախանին կազմակերպել Միդիաթի հանդիպումը Վ. Լենինի հետ²⁹: Այնուհետև նա խորհրդային ղեկավարությունից թույլտվություն է խնդրում այցելել Հյուսիսային Կովկաս՝ այնտեղ ապրող իր քրոջն ու բարեկամներին տեսնելու պատրվակով³⁰: Կովկասյան իր շրջագայության ժամանակ նա մի շարք գաղտնի հանդիպումներ է ունենում, որոնց հաջորդում է Հյուսիսային Կովկասի մի շարք շրջաններում հակաբոլշևիկյան ընդվզումների և ընդհարումների բռնկումը: Ուշագրավ է, որ Բեքիր Սամիի շրջագայությունը հնարավոր եղավ բոլշևիկյան կուսակցության կովկասյան կառույցների մի շարք ղեկավարների անհեռատեսության հետևանքով, քանի որ շատերն այն կարծիքին էին, թե Թուրքիայի Ազգային ժողովի կառավարության արտաքին գործերի նախարարի հանդիպումները կնպաստեն Հյուսիսային Կովկասում կոմունիստների դիրքերի ուժեղացմանը³¹: Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան երկրամասի ղեկավար Սկաչկոն դեռևս 1920 թվականի հուլիսի 2-ին Վ. Զիչերինին ուղղված նամակում գրում էր, որ «թուրքական ազգայնական շարժումը երբևիցե չի անցնի Անտանտի կողմը, այդ իսկ պատճառով ընդհանրապես պետք է բացառել Թուրքիայի՝ Խորհրդային Ռուսաստանին դավաճանելու հնարավորությունը: ... Այսօր պայքարել Կովկասի մահմեդական ժողովուրդների շրջանում եղած Թուրքիայի ազդեցության դեմ նշանակում է ուժեղացնել նրանց շրջանում Անտանտի ազդեցությունը: Թուրքական ազդեցությունից վախենալն անհեթեթություն է: Դրանից կարող են վախենալ միայն վրացի կամ հայ ազգայնականները, իսկ կոմունիստները նման հիմք չունեն»³²: Ի տարբերություն կովկասյան բոլշևիկյան կուսակցական կառույցների ղեկավարների՝ Հյուսիսային Կովկասում Բեքիր Սամիի գտնվելու և դրան հաջորդած ժամանակահատվածում անհանգստացնող տեղեկություններ ստանալով՝ Վ. Զիչերինն ավելի լավ էր պատկերացնում այդ այցի վտանգը և գիտեր, թե իրականում Բեքիր Սամին և թուրք ազգայնականները ինչպիսի գործունեություն են ծավալում թե՛ Հյուսիսային, թե՛ Հարավային Կովկասում: Իր մտահոգությունները նա հայտնել էր 1920 թվականի հոկտեմբերի 5-ին Ռուսաստանի կոմունիստական կուսակցության՝ քաղբյուրո հղած նամակում. «Հայ-ադրբեջանական

²⁹ Տե՛ս АВП РФ, ф. 04, секретариат Чучерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 31:

³⁰ Բեքիր Սամին ազգությամբ օս էր՝ Քունդուխ կամ Կունդուխով ճանաչված գերդաստանից: Ուշագրավ է, որ չնայած Թուրքիայում ազգանունները մտցվել են միայն 1934 թ., Բեքիր Սամին Ռուսաստան ոտք դրած պահից բոլոր տեղերում ներկայանում էր իր ազգանունով՝ Բեքիր Սամի Կունդուխով (տե՛ս **Yusuf Kemal Tengirsenk**, նշվ. աշխ., էջ 149):

³¹ «Известия ЦИК» պաշտոնական տեղեկագիրը տեղեկացնում էր, որ 1920 թ. հոկտեմբերի 7-ին «Գրոզնի է ժամանել Թուրքիայի հեղափոխական կառավարության՝ Բեքիր Սամիի ղեկավարած պատվիրակությունը» (АВП РФ, ф. 04, секретариат Чучерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 64):

³² АВП РФ, ф. 0132, референтура по Турциии, оп. 3, папка 102, д. 15, лл. 178, 178об.

վեճերի քննարկման ժամանակ ես մշտապես նշել եմ, որ Կովկասում թուրքական քաղաքականության նվաճողական միտումներ արձանագրելու դեպքում Հայաստանը դրա դեմ պատնեշ կլինի և կպաշտպանի մեզ: Այժմ Օրջոնիկիձեն գրում է Կովկասում թուրք փաշաների հակահեղափոխական դերի մասին, Սիտինի գեկույցները ցույց են տալիս, որ լեռնականների շրջանում մեր դեմ ուղղված շարժումը շատ ուժեղ է: Օրջոնիկիձեի խոսքերով՝ թուրքերի առաջխաղացումը կբարձրացնի մահմեդական Կովկասի բոլոր հակահեղափոխական տարրերի ոգին: Չէ՞ որ այնտեղ է նաև Նուրի փաշան՝ Բաքվի նվաճողը և հակաբոլշևիկյան նվաճողական քաղաքականության ներկայացուցիչը: Ուսմալը մեզ տեղեկություններ չի ուղարկում, էլիավան ժամանակին Թուրքիա չմեկնեց: Դրանց պատճառով մենք կզրկվենք քենալականների տրամադրվածությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններից՝ այն քաղելով միայն մեզանից զենք ստացող փաշաների և խորհրդարանի պատգամավորների պատմածներից: Դա մեկ անգամ ևս ապացուցում է, որ չի կարելի առանց վերահսկման զենք տրամադրել: ...Բեքիր Սամին ասաց, որ մեկնում է Վլադիկավկազ քրոջ հետ հանդիպելու համար: Դաշնակցին չէր կարելի մերժել, բայց ես պայմանավորվել էի Մեծինսկու³³ հետ, որ քույրը իրեն կսպասի Ռոստովում, այնուհետև իրեն (Բեքիր Սամին – Ա. Ա.) Ռոստովից հեռու չթողնեն: Չեմ հասկանում՝ ինչու դա չարվեց: Օրջոնիկիձեի խոսքերով՝ նա ինգուլների շրջանում անկախություն է քարոզում: Այս մեղադրանքում չի կարելի չտեսնել այն տեսակետի հերքումը, թե լեռնականներին միայն տնտեսական օգնություն է հարկավոր: Ռադեկն ասում է. «Լեռնականներին ոչ թե ինքնավարություն է պետք, այլ վարտիք»: Եթե դա այդպես լիներ, ապա Բեքիր Սամինի քարոզչությունը մեր բողոքը չէր հարուցի: Ակնհայտ է, որ լեռնականներին նաև որևէ այլ բան է հարկավոր»³⁴:

Հյուսիսային Կովկասից վերադառնալուց հետո՝ 1920 թվականի նոյեմբերի 5-ին, Բեքիր Սամին Վ. Չիչերինին գաղտնի նամակ է ուղարկում, որտեղ ներկայացնում է իր տպավորությունները Հյուսիսային Կովկասում տիրող իրավիճակի, լեռնականների տրամադրությունների և խորհրդային իշխանություններից նրանց սպասումների մասին³⁵: Այս նամակը շատ ուշագորավ է. այստեղ Բեքիր Սամին քողարկված սպառնում է Խորհրդային Ռուսաստանին և լեռնականների անունից բարձրացնում Հյուսիսային Կովկասին անկախություն տրամադրելու անհրաժեշտության հարցը: Նամակը բաժանված է երեք ենթաբաժնի. «1) ներքին իրավիճակը, 2) ինչ են սպասում լեռնականները խորհրդային կառավարությունից և 3) Վրանգելի կողմնակիցների և Անտանտի գործունեությունը»³⁶: Առաջին մասում Սամին հայտնում է, որ Կովկասում տիրում է ահաբեկչությունը, որևէ մեկը վստահ չէ ո՛չ իր ունեցվածքի, ո՛չ իր կյանքի համար: Դա մեծ դժգոհության պատճառ է դարձել, և մոտ 20 000 մարդ թաքնվել է լեռներում: «Մի խոսքով, ներկայումս Կովկասում գործող տեռորի համակարգը միայն հարու-

³³ Արտակարգ հանձնաժողովի (Всероссийская Чрезвычайная Комиссия – ВЧК) փոխնախագահ:

³⁴ АВП РФ, ф. 04, секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 40.

³⁵ Տե՛ս նույն տեղը, ճ. 52991, լ՛. 13-16:

³⁶ Նույն տեղում, էջ 13:

ցում է ժողովրդի դժգոհությունը, անվստահությունը խորհրդային իշխանության նկատմամբ և վերածումը լեռնականներին անհաշտ թշնամիների. դա ընդհանուր կարծիք է, որը ես ամենայն անկեղծությամբ հայտնում եմ Ձեզ»³⁷, - գրում է Բեքիր Սամին: Նամակում Բեքիր Սամին նշում է, որ «առանց բացառության բոլոր լեռնականները, չհաշված միայն նրանց, ովքեր շահում են ահաբեկչությունից և որոնց թիվը շատ չնչին է, միաձայն պահանջում են Կովկասյան խորհրդային Չանրապետության ստեղծում, որը պետք է ճանաչվի Մոսկվայի կառավարության կողմից: Լեռնականները ցանկանում են, մեծ խորհրդային Ռուսաստանի Դաշնային Չանրապետության անդամ մնալով, քաղաքական անկախություն ձեռք բերել: Որպես իմ երկրի մեծ ընկեր և բնական դաշնակից մեծ խորհրդային Ռուսաստանի Դաշնային Չանրապետության անկեղծ բարեկամ՝ ես թույլ կտամ ներքոհիշյալ մտքերն արտահայտել:

Լեռնականներն ազատություն են տենչում, նրանք դրա մասին բացեի-բաց խոսում են իրենց պաշտոնական հավաքների ժամանակ և հույս ունեն, որ խորհրդային կառավարությունը, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, թույլ կտա ազատորեն տնօրինել իրենց ճակատագիրը: Չաշվի առնելով բնակչության հոգեբանությունը, անկախության և ազատության նկատմամբ տածած սերը, բնավորության հիմնական գիծ հանդիսացող հավատարմությունն ու երախտագիտությունը՝ կարելի է վստահ ասել, որ եթե Մոսկվան տա նրանց այն, ինչի հույսեր նրանք տածում են, ապա նրանք կդառնան և կմնան Ռուսաստանի խորհրդային Չանրապետության իրական բարեկամներ: խորհրդային կառավարությունը կարող է այլևս չանհանգստանալ, թե Կովկասի կողմից նրան որևէ վտանգ կսպառնա, քանի որ նրա թշնամիների խառնակությունները պարարտ հող չեն գտնի և դատապարտված կլինեն կատարյալ անհաջողության: Չակառակ դեպքում, եթե խորհրդային կառավարությունը շարունակի մերժել նրանց պահանջները և պահել Չյուսիսային Կովկասը ռուսական նահանգի կարգավիճակում, ինչպես դա ցարիզմի օրոք էր, ես կարծում եմ, որ Անտանտի կողմնակիցները կօգտվեն ընդհանուր դժգոհությունից, մոտ ապագայում երկրում մեծ ընդվզումներ կիրահրեն և Կարմիր բանակը ստիպված կլինի մարտնչել նոր ռազմաճակատում»³⁸:

Բեքիր Սամին իր նամակում նշում է ևս երկու հանգամանք, որոնք հետագայում օգտագործել է Թուրքիան թե՛ Չյուսիսային Կովկասի նկատմամբ վարած քաղաքականությունում, թե՛ բոլշևիկների հետ հետագա բանակցություններում: Առաջինը նախազգուշացում է. «Անտանտականները (антантисты) վերջերս Բեյրութից հրավիրել են Շամիլի³⁹ որդուն՝ Քյամիլ փաշային, և նրա որդի Սաիդ բեյին»⁴⁰: Երկրորդը՝ «բարեկամական» առաջարկ, թե «իմ տեսակետից Թուրքիա արտագաղթելու թույլտվություն տրամադրելը նույնպես օգտակար կլինի լեռնականների համակրանքը շահելու համար»⁴¹:

³⁷ Նույն տեղում, էջ 13-14:

³⁸ Նույն տեղում, էջ 14-15:

³⁹ Կովկասյան պատերազմի ժամանակ Չյուսիսային Կովկասը միավորած և լեռնականների պատերազմը ղեկավարած շեյխ:

⁴⁰ Նույն տեղում, էջ 14:

⁴¹ Նույն տեղում, էջ 16:

Ինչ վերաբերում է լեռնականների շրջանում իր քարոզչությանը, Բեքիր Սամին փորձում էր վստահեցնել, որ նա բացատրում էր, որ Մեծ Բրիտանիան խալիֆի նստավայր Թուրքիային թշնամի պետություն է, և «խսլամին միակ բարեկամ պետությունը Խորհրդային Ռուսաստանն է, և միայն նա կարող է ապահովել Կովկասում բարեկեցություն և բարգավաճում»⁴²:

Բեքիր Սամիի՝ Վ. Չիչերինին հասցեագրած նամակն ուղղված էր նաև բոլշևիկյան կուսակցության և կառավարության այլ անդամների, քանի որ նա գիտեր, որ, ըստ գոյություն ունեցող կարգի, Չիչերինը պարտավոր էր այն ներկայացնել քաղբյուրոյի անդամներին, որոնցից մի քանիսն այնքան էլ համակարծիք չէին Հայաստանի հարցում Չիչերինի վարած գծի հետ: Այդ տեսակետից Բեքիր Սամին իր նամակով նպատակ էր հետապնդում ուժեղացնել այդ տարածայնությունները և կասկածները Չիչերինի վարած քաղաքական գծի վերաբերյալ՝ Հայաստանի և Վրաստանի միջոցով թուլացնելու մահմեդական գործունեությունը⁴³: Արևմտյան Հայաստանի երեք շրջանի դիմաց Հյուսիսային Կովկասի խնդրի արծարծմամբ Բեքիր Սամին քողարկված ուղերձ հղեց Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությանը, թե, ի տարբերություն Վանի, Մուշի և Բիթլիսի, որտեղ այդ պահի դրությամբ հայկական բնակչություն չէր մնացել, և ռուսներն ազդեցության կամ ճնշում գործադրելու որևէ իրական մեխանիզմ չունեն, Հյուսիսային Կովկասում Թուրքիան թե՛ ազդեցություն, թե՛ լուրջ խնդիրներ հարուցելու հնարավորություն ունի: «Անկախության դիմաց անկախություն» բանաձևով Բեքիր Սամին հաջողվեց որոշակիորեն արժեզրկել Վ. Չիչերինի առաջարկը:

Վ. Չիչերինի առաջարկի արժեզրկման համար թուրքական դիվանագիտությունն օգտագործեց նաև հետևյալ միջոցը. այն ներկայացվեց ոչ թե որպես Խորհրդային կառավարության համաձայնեցված դիրքորոշում, այլ իբրև հայ կոմունիստների, առաջին հերթին՝ Չիչերինի տեղակալ Լ. Կարախանի, արտաքին գործերի կոմիսարիատում աշխատող Ավանեսովի և մյուսների ազդեցության արտահայտություն: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ 1920 թվականի հոկտեմբերի 16-ի գաղտնի նիստում ունեցած ելույթում Յուսուֆ Քեմալը նշում էր. «Կարախանը հայ է: Կոմունիստ հայ: Երկար ժամանակ այսօրվա ռուս հեղափոխականների հետ աշխատած իրական կոմունիստ է: Չեն ասում բոլշևիկ է: Բոլշևիկի և կոմունիստի ինչ լինելը քիչ անց կպարզաբանեն: Այսինքն՝ Կարախանը քանի որ կոմունիստ է, պետք է որ ազգայնական չլինի, սակայն, բնականաբար, երակների արյան ազդեցությունը կա: Դրա հետ մեկտեղ շատ սրամիտ, մեր նկատմամբ բավականին անկեղծ է երևում»⁴⁴: Նույն մարտավարությունը երևում է նաև

⁴² Նույն տեղում, էջ 15:

⁴³ Այն, որ քենալականների և մասնավորապես Բեքիր Սամիի տեսակետը տարածում էր գտել բոլշևիկյան շրջաններում, վկայում է նաև ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Լև Կարախանին Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Յակով Սուրիցիի՝ 1927 թվականի հոկտեմբերի 10-ի գաղտնի նամակը, որտեղ վերջինս, անդրադառնալով այն հարցին, թե ճիշտ էր արդյոք օգնել Թուրքիային 1920-21 թթ., միանշանակ դրական պատասխան է տալիս՝ նշելով, որ «մենք այդ օգնությամբ խոչընդոտում էինք իմպերիալիստների ներթափանցումը մեր Կովկաս: Այդ օգնությունը թելադրված էր ոչ միայն ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ մեր համակրանքով, այլև մեր սեփական տարածքի ռազմական անվտանգության պահանջներով» (АВП РФ, ф. 08, секретаруам Каракана, он. 10, напка 38, д. 265, л. 27):

⁴⁴ TBMM Gizli Celse Zabıtları, cilt 1, 24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1336 (1921), Ankara, 1985, s. 160.

1920 թվականի հոկտեմբերի 25-ի՝ Անկարայում խոհրդային Ռուսաստանի ներկայացուցչության առաջին քարտուղար Ուպմալ-Անգարսկու՝ Անկարայի կառավարության արտաքին գործերի նախարարի տեղակալի հետ հանդիպման ժամանակ, երբ վերջինս Չիչերինի «անսպասելի առաջարկը» վերագրեց «Կարախանի և Ավանեսովի անձնական ազդեցությանը, որոնք լինելով լավ կոմունիստներ, դրա հետ մեկտեղ չեն կարողանում հրաժարվել հայերի նկատմամբ եղած վտանգավոր համակրանքից»⁴⁵:

Ուշագրավ է, որ թուրք պատմաբանները, մասնավորապես «ձախ քենալիզմի» ուղղության ներկայացուցիչ Դողան Ավջիօղլուն, հենվելով 1921 թվականի Մոսկվայի բանակցությունների մասնակից Ռըզա Նուրի վկայության վրա, Բեքիր Սամին համարում են բուլշևիկների հետ «համագործակցող» (işbirlikçi)⁴⁶: Նա գրում է, որ «երբ Չիչերինը Վանը հայերի համար պահանջեց, Բեքիր Սամին և Յուսուֆ Քենալը համաձայնվեցին: Սակայն ասացին. «Նախ Ազգային մեծ ժողովին հարցնենք»: Բեքիր Սամին էլ ասաց. «Եթե օսերին անկախություն տաք, ես էլ, համոզվելով մեջլիսին, Վանը հայերին կհանձնեմ»: Այդ մասին ես հարցրել եմ Չիչերինից, որն էլ հաստատեց դա: ... Բեքիր Սամին, Ռուսաստան զնալով, անունից հրաժարվեց և «արքայազն Կոնդուխ» դարձավ: Ռուսաստանում հարցնում էի Բեքիր Սամին մասին, չէին ճանաչում: Ընտանիքի ազգանունը Կոնդուխ էր, և նա արքայազն էր... Երբ ես տեղեկացա, դրանից նեղվեցի: Թուրքական կրթությամբ և հացով մեծացած մեկը, դարձյալ թուրքական փողով թուրք պետության ամենածանր օրերին թուրքի փրկության համար է ուղարկվում: Նա էլ, թուրքի գործը թողած, իր հայրենակից օսերի անկախության համար է աշխատում: Նպատակը այնտեղ արքայազն լինելն էր»⁴⁷: Մոսկվայի բանակցությունների մասին պատմող իր հուշերի գրքում ուրիշ անգամ, բնութագրելով Բեքիր Սամին դիվանագիտական գործունեությունը, Ռըզա Նուրը գրում է. «Բեքիր Սամին դիվանագիտությունը լի էր վատ նշաններով: Այս մարդը նոր Թուրքիայի առաջին դիվանագետն էր, և նրա ամբողջ գործունեությունը անհաջողությունների շարան էր»⁴⁸:

Հաշվի առնելով, որ հետագայում Բեքիր Սամին հեռացվեց իր պաշտոնից⁴⁹, և նրան մեղադրեցին բուլոր անհաջողությունների մեջ, Ռըզա Նուրի վրդովմունքը և Բեքիր Սամին չեղած հանցանքներ վերագրելը հասկանալի է: Այն, որ Բեքիր Սամին իր բանակցությունների մասին մանրա-

⁴⁵ АВП РФ, ф. 04, секретариат Чучерина, оп. 39, папка 232, д. 52991, л. 2.

⁴⁶ Տե՛ս **Doğan Acıoğlu**, Milli Kurtuluş Tarihi, 1838'den 1995'e, cilt I, İstanbul, 1998, էջ 233-234:

⁴⁷ Ռըզա Նուրի միտքը բերվում է Doğan Acıoğlu-ի նշված աշխատությունից, էջ 233-234: Ուշագրավ է, որ նույն պատճառներով Թուրքիայի հյուսիսկովկասյան համայնքում Բեքիր Սամին հարգված անձնավորություն չէր, որովհետև նրան մեղադրում էին այն բանում, որ, մասնակցելով բազմաթիվ միջազգային համաժողովներին, նա ջանքեր էր գործադրում ոչ թե համաչեքեզական ուղղությամբ, այլ զուտ հանուն իր հայրենակիցների՝ օսերի, ինչի համար էլ համայնքը նրան բնութագրում է որպես «և՛ իր հայրենակիցների, և՛ Թուրքիայի հարցում անհավասարակշռված քաղաքականություն վարած անձ» (**Izzet Aydemir**, Muhaceretteki Çerkes Aydınları, Ankara, 1991, ss. 81-82):

⁴⁸ Dr. Rıza Nur'un Moskova-Sakarya Hatıraları, İstanbul, 1991, s. 121.

⁴⁹ Բեքիր Սամին 1921 թ. անգլիացիների հետ բանակցությունների ժամանակ նույնպես փորձեց շահարկել Դյուսիսային Կովկասի հարցը և հանդես եկավ այնտեղ ռուսների դեմ բուժերային պետություն ստեղծելու առաջարկով, որի մասին տեղեկանալով՝ Չիչերինը խիստ նոտա է հղում Անկարա (տե՛ս **Doğan Acıoğlu**, նշվ. աշխ., էջ 233):

մասն հաշվետվություն է ներկայացրել Թուրքիայի Ազգային մեծ ժողովին, ակնհայտ է դառնում Չիչերինի առաջարկի քննարկմանը նվիրված ԹԱՄԺ-ի 1920 թվականի հոկտեմբերի 16-ի և 17-ի գաղտնի նիստերի արձանագրություններից⁵⁰: Ընդ որում՝ 1920 թվականի հոկտեմբերի 16-ի նիստում Յուսուֆ Քեմալը բացեիբաց հայտարարել է, որ «միաժամանակ ռուսական պատվիրակությունն արևելքում Հայաստանին հող տալու առաջարկ արեց: Մեր պատվիրակությունը մերժեց այդ առաջարկը և շատ ջանաց պահպանել մեր ազգային սահմանը: Սակայն տեսնելով, որ չենք կարողանում համոզել մեր զրուցակիցներին, հայտարարեցինք, որ մենք իրավասու չենք լուծելու նման խնդիր, եկանք այստեղ՝ իմանալու (խորհրդարանի) տեսակետն ու նկատառումները»⁵¹:

Ի տարբերություն Հայաստանին Մուշի, Բիթլիսի և Վանի վիլայեթներից տարածք հատկացնելու հարցում բոլշևիկյան ղեկավարությունում եղած տարածայնությունների և տարբեր մոտեցումների⁵², Անկարայի կառավարության բոլոր անդամներն այդ հարցում միակարծիք էին, քանի որ նման առաջարկը հակասում էր ամբողջ ազգայնական շարժման էությանը, որն առաջին հերթին ուղղված էր Հայաստանին և Հունաստանին տարածք գիջելու դեմ: Թուրքիայի համար Ազգային ուխտի սահմաններում նշած տարածքներին տիրանալու խնդրի կենսական նշանակություն ունենալու մասին վկայում են նաև փակ նիստերի ժամանակ պատգամավորների բուռն ելույթները. ոմանք կոչ էին անում հրաժարվել բոլշևիկների հետ համագործակցությունից: Առանձնահատուկ ուշագրավ է 1920 թվականի հոկտեմբերի 17-ի գաղտնի նիստում Գյումուշհանեի պատգամավոր Հասան Ֆեհմիի արտահայտած հետևյալ միտքը. «Գիտեք, որ տեղահանության հարցն աշխարհին աղմուկ բարձրացնելու և մեզ բոլորիս որպես մարդասպան ընկալելու իրադարձություն դարձավ: Դա անելուց առաջ գիտեինք, որ քրիստոնեական աշխարհն այն չի մարսելու, և դրա համար ամբողջ կատաղությունն ու ատելությունն ուղղվելու են մեր դեմ: Ինչո՞ւ մենք ինքներս մեզ կացրեցինք մարդասպանի պիտակը: Ինչո՞ւ այդպիսի վճռական և դժվարություններով լի գործի մեջ մտանք: Դա մենք արեցինք միայն մեզանից ավելի թանկ և ավելի սուրբ հայրենիքի ապագան ապահովելու համար: Այս խնդիրը ռուսներն ընկալում են այնպես, թե նրանց հայտարարած սկզբունքներին հավատարիմ և ինտերնացիոնալիստական իդեալիզմով պայմանավորված մենք ինչ-որ շրջան բնակչության հետ միասին անջատելու ենք և ուրիշին հանձնելու: Իրականում այդ ինչ-որ շրջանի վերաբերյալ խնդիր գոյություն ունի: Պետք է ասել նրանց, որ այնտեղ ապրող մարդիկ ոչ թե ձեր, այլ թուրքերի իշխանությունն են ուզում: Մի՞թե այդ մարդկանց ընդհանուր ցանկության մասին նրանք անտեղյակ են: Վան, Բիթլիս, Էրզրում վիլայեթներում և ամբողջ բարձրավանդակ կոչված տարածաշրջանում միզուցե հինգ հազար հայ էլ չլինի»⁵³:

⁵⁰ St'ın TBMM Gizli Celse Zabıtları, cilt 1, 24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1336 (1921), Ankara, 1985, էջ 157-187: Երկու նիստն էլ նախագահում էր խորհրդարանի ղեկավար Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը:

⁵¹ Նույն տեղում, էջ 158:

⁵² Բոլշևիկյան կառավարության անդամներից շատերն այն կարծիքի էին, որ այդ հարցը լուծվել է դեռևս 1918 թվականի Բրեստ-Լիտովսկի պայմանագրով:

⁵³ TBMM Gizli Celse Zabıtları, cilt 1, 24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1336 (1921), Ankara, 1985, s. 177.

Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 1920 թվականի հոկտեմբերի 16-ի և 17-ի գաղտնի նիստերում պատգամավորներն անդրադարձել են նաև Ղյուսիսային Կովկասի խնդրին: Նախ 1920 թվականի հոկտեմբերի 16-ի նիստի ժամանակ Յուսուֆ Քեմալը հայտարարեց, որ, չնայած Կովկասում տեղի ունեցած վերջին իրադարձություններին, մասնավորապես Թուրքիայի օգնությամբ Ադրբեջանի խորհրդայնացմանը, «Ադրբեջանը դարձյալ պատրաստ է զոհվել հանուն թուրքերի: ... Թուրքիա ասելիս ես նկատի չունեմ միայն թուրքերին: Որովհետև նույն խոսքերն են ասում նաև հյուսիսկովկասցիները»⁵⁴: Հոկտեմբերի 17-ի նիստում Բոլուի պատգամավոր, ազգությամբ չերքեզ գեներալ Մեթ Իզզեթ փաշան⁵⁵ իր ելույթում նշել է. «Հետաքրքիր է, միայն Օսմանյան պետությունում՝ Թուրքիայում են մասսայաբար մարդիկ ոչնչացվել: Չերքեզների, Դաղստանի բնակչության, ամբողջ մահմեդականների մարդասպանները ռուսներն են»⁵⁶: Այնուհետև նա հետաքրքրվել է, թե ինչու խորհրդարանը չի քննարկում Ադրբեջանի և Ղյուսիսային Կովկասի հարցը: Ի պատասխան այս հարցադրմանը, Յուսուֆ Քեմալը, նկատի ունենալով Բեքիր Սամիի գործոնը, ասել է. «Յուսուֆ Իզզեթ փաշան նշեց, որ Ադրբեջանից, Ղյուսիսային Կովկասից չի խոսվում: Ղյուսիսային Կովկասից խոսելու հնարավորություն չեղավ: Որովհետև մեր ղեկավարը հյուսիսկովկասյան ծագում ունեցող և Ղյուսիսային Կովկասի մասին մտածող մի արժեքավոր անձնավորություն է: Սակայն ես կարծում եմ, որ այսօր այստեղ քննարկվող խնդրի վերաբերյալ վերջին առաջարկությունը պատկանում է կառավարությանը»⁵⁷:

Խորհրդարանի նիստերից հետո Մուսթաֆա Քեմալը Թուրքիայում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչության առաջին քարտուղար Ուսմալ-Անգորսկու հետ հանդիպման ժամանակ նշել է, որ մեջլիսը բացասական արձագանք տվեց Չիչերինի առաջարկին, և որ պատգամավորներից շատերը պահանջեցին հրաժարվել բոլշևիկների օգնությունից, ու եթե նա հարցը քվեարկության դներ, ապա դա կնշանակեր հարաբերությունների անմիջական խզում: Այդ իսկ պատճառով նա խուսափել է այդ քայլից և խոստացել անձամբ կարգավորել խնդիրը⁵⁸: Այնուհետև նա ասել է, որ

⁵⁴ Նույն տեղում, էջ 172: 1920 թվականի հոկտեմբերի 16-ի նիստում քննարկվել է նաև Գյանջայում ադրբեջանցիների և Կարմիր բանակի միջև տեղի ունեցած ընդհարումների հարցը: Յուսուֆ Քեմալը մեջլիսում տված պարզաբանությունում նշել է, որ դեպքի պատճառը «հայերի խառնակությունները և Նուրի փաշայի երեխայությունն է» (նույն տեղում):

⁵⁵ Յուսուֆ Իզզեթ փաշա (Մեթ Չունաթուք Իզզեթ, 1875-1922) – թուրքական բանակի գեներալ, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր, չերքեզ հասարակական գործիչ, չերքեզների պատմության գրքերի հեղինակ և չերքեզական առաջին այբուբենի նախածեռնող: 1918 թ. Յուսուֆ Իզզեթ փաշայի գլխավորած բանակը հասել էր Ղյուսիսային Կովկաս, և նա անձամբ մեծ դերակատարություն է ունեցել Ղյուսիսային Կովկասի Լեռնականների Հանրապետության ստեղծման գործում (տե՛ս İzzet Aydemir, Muhacereteki Çerkes Aydınları, Ankara, 1991, էջ 7-13, ինչպես նաև՝ Portraits From The Circassian History: Yusuf Izzet (Met Chunutuko Yusuf Izzet; Yusuf Izzet Pasha) (1876-1922), www.circassianworld.com/new/circassians/1505-portraits-yusuf-izzet-pasha.html)

⁵⁶ TBMM Gizli Celse Zabıtları, cilt 1, 24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1336 (1921), Ankara, 1985, s. 184.

⁵⁷ Նույն տեղում, էջ 187:

⁵⁸ Տե՛ս АВП РФ, ф. 04, секретаруат Чучерина, оп. 39, папка 232, д. 53001, л. 3:

Թուրքիան հրաժարվում է այդ պայմանով ստորագրել ռուս-թուրքական պայմանագիրը⁵⁹:

Մուսթաֆա Քեմալը իրեն դրսևորում է որպես հմուտ դիվանագետ և շահարկում է նույն փաստարկները, ինչ բերվել էին Վ. Չիչերինի կողմից՝ պարզապես տալով դրանց հակառակ մեկնաբանություն և քաջ գիտակցելով, որ բուլշևիկների համար առաջնային կարևորություն ունի համաշխարհային հեղափոխության խնդիրը, իսկ Թուրքահայաստանի հարցը երրորդական է: Ջարմանք է արտահայտում, թե ինչպես խորհրդային կառավարությունը պատրաստ է զոհաբերել համաշխարհային հեղափոխության հաղթանակի համար անհրաժեշտ հեղափոխական ուժերի միավորման հարցը Թուրքահայաստանի նման երրորդական հարցի համար և «թող միայն հետ կանչի այդ առաջարկը, և նա կհամաձայնվի մյուս բոլոր պահանջների հետ»⁶⁰: «Նա նույնիսկ կարող է ստիպել Թուրքիային խորհրդային Ռուսաստանի հետ կոնֆեդերացիա կազմել»⁶¹, - գրել է Ուլամալ-Անգորսկին: Աթաթուրքն անդրադարձել է նաև Վ. Չիչերինի այն փաստարկին, թե Ջեմալն ու Չալիլը համաձայնել են Վանն ու Մուշը հայերին հանձնելու առաջարկին, և ասել, որ «Ռուսաստանում գտնվող Չալիլը, Ջեմալն ու Էնվերն Արևելքում արդյունավետ աշխատանք ծավալելու համար Թուրքիայից լիազորություններ են ուզում, սակայն նա իրենց չի պատասխանել և կպատասխանի միայն պայմանագրի ստորագրումից հետո»⁶²:

Այսպիսով, օգտագործելով Հայաստանի հարցում բուլշևիկյան ղեկավարության մեջ եղած տարակարծությունը, Հյուսիսային Կովկասի խնդիրը և ԹԱՄԺ միասնական կոշտ դիրքորոշումը, Անկարայի կառավարությանը հաջողվեց արժեզրկել և թուրք-ռուսական բանակցությունների օրակարգից հանել Վանը, Բիթլիսն ու Մուշը Հայաստանին վերադարձնելու Չիչերինի առաջարկը: Այդ խնդիրը վերջնականապես դուրս եկավ օրակարգից հայ-թուրքական պատերազմի⁶³ և 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում պայմանագրի ստորագրումից հետո, չնայած այն բանին, որ նույնիսկ 1920 թ. պայմանագրից հետո դեկտեմբերի 5-ին Էլիավային գրած նամակում Չիչերինը նշում էր, որ «թուրքերի հետ մենք տարածայնություններ ունենք երկու կետի շուրջ. մենք չենք ընդունում թուրքական սահմանների որոշումը ըստ Ազգային ուխտի, որը գրեթե արտացոլում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, և սկզբունքորեն պահանջում ենք Թուրքահայաստանի նույնիսկ որոշ մասի անկախության ճանաչում, որը բավարար կլինի թուրքահայերի ասպրելու համար»⁶⁴:

⁵⁹ Տե՛ս նույն տեղը:

⁶⁰ Նույն տեղում:

⁶¹ Նույն տեղում:

⁶² Նույն տեղում: Մ. Քեմալը քաջ գիտակցում էր, թե ինչ հույսեր են կապում բուլշևիկները Արևելքում երիտթուրքերի ունեցած ազդեցության հետ և նրանց օգտագործում են Աֆղանստանի և Հնդկաստանի հետ կապեր հաստատելու համար (տե՛ս АВП РФ, ф. 08, секретариат Каракана, оп. 10, папка 38, д. 263, л. 146-147):

⁶³ 1920 թ. հայ-թուրքական պատերազմի մասին ավելի մանրամասն տե՛ս **Կ. Սասունի**, Հայ-թրքական պատերազմ (1920-ին), Պէրոս, 1969, **Է. Ա. Ջոհրաբյան**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997:

⁶⁴ АВП РФ, ф. 04, секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 7.

ԹԱՄԺ-ի գաղտնի նիստերի արձանագրություններից ևս երևում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագրից հետո թուրքերին այլևս չէր մտահոգում Չիչերինի առաջարկը: Կարսի կոնֆերանսի նախապատրաստման բանակցությունների ժամանակ Հայաստանի հետ տարածքային հարցերից նրանց ավելի մտահոգում էր այն, որ հայերը չեն համաձայնի Իզդիրը զիջել Թուրքիային, քանի որ այն Ազգային ուխտի սահմաններում չի ընդգրկված, թուրքական տարածք չի եղել, և այնտեղից մինչև Հայաստանի մայրաքաղաք «մեկուկես ժամվա ճանապարհ է»⁶⁵:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ հաշվի առնելով դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կառավարությունների՝ Հյուսիսային Կովկասի հետ ստեղծած կապերը, Թուրքիայի ազդեցությունն այդ տարածաշրջանում և բուլղարիկների համար անցանկալի զարգացումներ հրահրելու հնարավորության ապացույցներ ներկայացնելով, քեմալական դիվանագիտությունը, 1920 թ. օգոստոս ամսին Մոսկվայում տեղի ունեցած ռուս-թուրքական բանակցությունների ժամանակ բարձրացնելով Հյուսիսային Կովկասին անկախություն տալու խնդիրը, ի հակակշիռ Չիչերինի՝ Արևմտյան Հայաստանի Վանի, Բիթլիսի և Մուշի վիլայեթները Հայաստանի Հանրապետությանը հանձնելու առաջարկի, Խորհրդային Ռուսաստանի կառավարությանն ընտրության առաջ կանգնեցրեց և արժեզրկեց Չիչերինի առաջարկը: Հաշվի առնելով, որ Թուրքահայաստանի տարածքի պահպանումը սկզբունքային նշանակություն ուներ Թուրքիայի համար, իսկ վերոնշյալ վիլայեթների և նույնիսկ Հայաստանի Հանրապետության խնդիրը Խորհրդային Ռուսաստանի համար առաջնային նշանակության հարցերից չէր, քեմալական կառավարությանը հաջողվեց բանակցությունների օրակարգից հանել այդ կետը՝ տապալորություն ստեղծելով, որ նա իր հերթին հրաժարվում է Հյուսիսային Կովկասի կամ միայն օսերի անկախությունը ճանաչելու Բեքիր Սամիի առաջարկից:

АРСЕН АВАГЯН – *Манипуляция вопросом о независимости Северного Кавказа на русско-турецких переговорах 1920 года.* – На состоявшихся в августе 1920 г. в Москве переговорах в ответ на предложение В. Чичерина передать Ванский, Мушский и Битлисский вилайеты Армении глава турецкой делегации предъявил контрпредложение – признать независимость Северного Кавказа. Чтобы продемонстрировать влияние Турции на горцев, в частности её способность подтолкнуть нежелательное для коммунистических властей развитие событий на Северном Кав-

⁶⁵ 1921 թ. Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո քեմալական կառավարությունը չէր համաձայնում Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հետ բանակցություններ վարել և առանձին պայմանագրեր ստորագրել: ԹԱՄԺ-ի 1921 թ. սեպտեմբերի 13-ի գաղտնի նիստում նման բանակցությունների ժամանակ հայերի կողմից ներկայացվելիք հավանական պահանջների կապակցությամբ մտահոգություն է հնչեցրել Կարսի պատգամավոր Ջավիդը՝ ասելով. «Եթե այնտեղ նույնիսկ արտաքուստ որևէ վիճելի խնդիր չկա, իրականում այդպիսի խնդիր է Իզդիրը, Սուրմալուի հովիտը: Որովհետև Իզդիրի Արաքսի մոտից մինչև Երևան մեկուկես ժամվա ճանապարհ է: Դա Գյումրիի (Ալեքսանդրապոլի) պայմանագրով մեզ զիջած տարածք է: Հայերը երբեք դրան չեն համաձայնի, մեզանից այն հետ կպահանջեն» (TBMM Gizli Celse Zabıtları, cilt 2, 17 Mart 1337 (1921) – Şubat 1337 (1922), Ankara, 1985, s. 233):

казе, в октябре 1920 г. Бекир Сами предпринял поездку по этому региону, которая вызвала в Москве серьёзное беспокойство.

Тогда же, 16 и 17 октября, предложение Чичерина обсуждалось на двух тайных заседаниях Великого национального собрания Турции. Вслед за этим в разговоре с первым секретарём полпредства РСФСР в Анкаре Упмалом-Ангорским председатель ВНС Мустафа Кемаль напрямую увязал дальнейшее развитие русско-турецких отношений и подписание двустороннего договора с необходимостью отозвать предложение Чичерина. После армяно-турецкой войны и подписания Александропольского договора (2 декабря 1920 г.) вопрос о передаче названных вилайетов Армении фактически был снят с повестки дня.

ARSEN AVAGYAN – *The Speculation of the Independence Issue of North Caucasus during the Russian-Turkish Talks in 1920.* – During Russian-Turkish negotiations in Moscow in August, 1920 in response to V. Chicherin's offer to give the provinces of Van, Bitlis and Mush to the Republic of Armenia, the head of the Turkish delegation, the Minister for Foreign Affairs of the Ankara Government presented a counterproposal to recognize the independence of North Caucasus.

To demonstrate the influence of Turkey in this region and the possibility of inciting undesirable development for Communist Authorities among the mountain dwellers, in October, 1920 Bekir Sami made a trip to North Caucasus, causing great concern to the government of Soviet Russia.

Two secret meetings of the Turkish Grand National Assembly have been dedicated to the discussion of the proposal of Chicherin on October 16 and 17, 1920, to transfer three provinces of Armenia. Then the chairman of TGNA Mustafa Kemal in a conversation with the First Secretary of the Embassy of the RSSFR in Ankara Upmal-Angorsky directly linked subsequent development of Russian-Turkish relations and the signing of a bilateral agreement on the need to recall the proposals of Chicherin.

After the Armenian-Turkish War and the signing of the Agreement of Gyumri on December 2, 1920, the issue of transferring the above mentioned provinces of Armenia was actually removed from the agenda of Russian-Turkish negotiations.